ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «4» հուլիսի 2013թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 20-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՇՆՈՐՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի 1269-Ն որոշման 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում շնորհառու հանդիսացող գիտաշխատողներին տրվող հավելավճարների դրամական միջոցների տրամադրման պայմանագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի
2013 թ. հուլիսի 4-ի N20-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՇՆՈՐՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան _____ 2013 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս նախագահ Ս. Հարությունյանի (այսուհետ՝ Հանձնարարող), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ -ը,
(կազմակերպության անվանումը)
(այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն/ռեկտոր _____ -ի (այսուհետ՝ Հանձնակատար), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի հուլիսի 4-ի N20-Ա/Ք հրամանը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Հանձնարարողը պարտավորվում է Հանձնակատարին տրամադրել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթում շնորհառու հանդիսացող գիտաշխատողների համար տրվող հավելավճարների դրամական միջոցները՝ գիտաշխատողներին վճարելու նպատակով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի գինն է՝ (տրամադրվող դրամական միջոցների չափը)
--------- դրամ (_____)
(թվերով և բառերով)

ՀՀ դրամ՝ թվով ----- գիտաշխատողին հավելավճար վճարելու նպատակով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Հանձնարարողը սույն պայմանագրի 2.1 ենթակետում նշված ֆինանսական միջոցները Հանձնակատարին է տրամադրում ամսեկան կտրվածքով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Հանձնարարողն իրավունք ունի.
4.1.1. հավելավճար ստանալու ընթացքում գիտաշխատողների 6 ամսից ավել արտերկիր գործուղվելու դեպքում՝ ընդհատել ֆինանսավորումը.
4.1.2. ցանկացած ժամանակ ստուգել Հանձնակատարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների իրականացման ընթացքը:
4.2. Հանձնարարողը պարտավոր է.
4.2.1. սույն պայմանագրի 3.1 ենթակետով սահմանված ժամկետներում Հանձնակատարին տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:
4.3. Հանձնակատարը իրավունք ունի.
4.3.1. Հանձնարարողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
4.4. Հանձնակատարը պարտավոր է.
4.4.1. հավելավճար ստանալու ընթացքում գիտաշխատողների արտերկիր գործուղվելու դեպքում ներկայացնել տեղեկանք.
4.4.2. սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարել անձամբ և սահմանված ժամկետներում.
4.4.3. Հանձնարարողի պահանջով նրան տրամադրել սույն պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
6.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
ք. Երևան, փ. Օրբելի 22
1 ՏԳԲ 900011033033
Կոմիտեի նախագահ՝ Ս. Հարությունյան

ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ